Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը

Կատարող՝ Մասիսի թիվ 1 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-Ի միջին Ա խմբի դաստիարակ Հերիքնազ Միրզախանյան

ԵՐԵՎԱՆ- 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1.

1.1 Հայրենասիրական դաստիարակության նպատակը…….....5

1.2 Նախադպրոցականներին հայրենասիրական ոգով դաստիարակելու սկզբունքները……7

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ.....……....10

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……16

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……..……17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Հայրենաճանաչողությունը սկիզբ է առնում մեր ընտանիքից, բակից, այգուց, դպրոցից, քաղաքից և տարածվում է մինչև մեր հայրենիքի հեռավոր անկյուններ: Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիարակությունը մանկավարժական նպատակային գործընթաց է, որի նպատակն է ձևավորել երեխաների պատկերացումներն իրենց հայրենիքի մասին, ինչպես նաև զարգացնել նրանց մեջ հայրենասիրության զգացումը: Հայրենասիրության և հայրենիքի հանդեպ սիրո հիմքերը երեխայի մեջ դրվում են ոչ միայն ընտանիքում, այլև մանկապարտեզում: Ն.Ֆ.Անդրեևան հայրենասեր հասկացությունը սահմանել է հետևյալ կերպ. «Լինել հայրենասեր նշանակում է զգալ իրեն հայրենիքի անբաժանելի մասը: Այս բարդ զգացողությունն առաջանում է դեռ նախադպրոցական տարիքում, երբ դրվում են շրջակա աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի հիմքերը, որոնք ձևավորվում են աստիճանաբար: Եվ հետևաբար, արդեն նախադպրոցական մանկության տարիներին մարդուն որպես իր երկրի քաղաքացի դաստիարակելը շատ կարևոր է դառնում»:

Ուստի թեման այսօր առավել քան արդիական է:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել նախադպրոցականների հայրենաճանաչողության ձևավորման գործընթացը նախադպրոցական ուսումնական հաստատությունում:

Հետազոտության խնդիրներն են.

1. Ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:
2. Ներկայացնել հայրենասիրական դաստիարակության նպատակը նախադպրոցական տարիքում:
3. Առաջարկել հայրենաճանաչողության ձևավորմանն ուղղված պարապմունքներ:

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ **մեթոդները՝**

- Մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն
- Դիտում
- Զրույց

Հետազոտական աշխատանքը **բաղկացած է** ներածությունից, երկու գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, համակարգչային շարվածքով կազմում է 17 էջ:

ԳԼՈՒԽ 1.

1.1 Հայրենասիրական դաստիարակության նպատակը

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն <<պատրիոտ> բառից>> և նշանակում է հայրենիքը սիրող։ Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է։ Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է։ Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորում տվյալ մարդու՝ սանի, դեպի իր հայրենիքն ունեցած սիրո մեջ։

Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ։ Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը։ Եթե հայրենիքում ժողովուրդ չկա, ուրեմն հայրենիք չկա։ Առանց հայրենիքի, առանց հարաատ ժողովրդի մարդը լքյալ է։ Ցիցերոնն ասում էր՝ <<Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի մեջ՝ <<Հայրենիք>>։

Մանկապարտեզը, մանկավարժները և ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները։ Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ։ Մեր սերունդների հայրենասիրական զգացմունքների ձևավորման գործում կարևոր դեր կարող են խաղալ մեր պետության խորհրդանիշները՝ գերբը, դչոշը, օրհներգը և զինանշանը։

Հայրենասիրական դաստիրակությունը հայրենիքի հանդեպ սիրո դաստիրակությունն է, նրան նվիրվածությունը նրա հանդեպ պատասխանատվությունը։ Նախադպրոցական տարիքի երեխաների հայրենասիրական դաստիրակության խնդիրները բավականին շատ են։ Հիմնականում երեխաները սովորում են սիրո զգացում իր հայրենի բնության,

ընտանիքի և տան համար, ինչպես նաև ուղղակիորեն այն երկրի պատմությունն ու մշակույթին որտեղ նրանք ապրում են: Ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիրակությունը պետք է սկսվի իր հայրենի քաղաքի, բակի, մանկապարտեզի, երկրի նկատմամբ սիրո դաստիարակությաբ: Հայրենասիրություն սերմանելու գործընթացը գաղափարական աշխատանքի անբաժանելի մասն է ու հիմնական խնդիրներից մեկը: Դաստիրակի և ծնողի խնդիրն է երեխաների մեջ հնավառինս արթնացնել սերը հայրենի հողի նկատմամբ: Նրանց մեջ ձևավորել այնպիսի բնավորության գծեր, որոնք կօգնեն նրանց դառնալ արժանավոր մարդ և իրենց երկրին արժանի քաղաքացի:

Նախադպրոցական տարիքի երեխաների ծանոթությունը հայրենի քաղաքի, տարածաշրջանի հետ երկար և բարդ գործընթաց է: Դրական արդյունքի կարելի է հասնել միայն համակարգված աշխատանքով: Երեխաներին պետք է սովորացնել սիրել իրենց քաղաքը հասկացնել որ իրենց քաղաքը հայրենիքի մի մասն է: Հայրենասիրական դաստիրակության համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ և ձևեր: Այդ նպատակով արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ, դիտարկումներ, բացահայտումներ որոնք ավելի կմոտիվացնեն երեխաներին սյուն թեմայի ընկալմանը և յուրացմանը: Հայրենասիրական զգացմունքների ձևավորումն ավելի արդյունավետ է, եթե մանկապարտեզը սերտ կապ հաստատի ընտանիքի հետ: Ընտանիքի հետ աշխատանքում մանկապարտեզը պետք է ապավինի ծնողներին որպես երեխայի անհատականության ձևավորման իրավահավասար մասնակիցներ: Հայրենաճանաչողության դաստիրակության նպատակն է կրթել հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին:

Հայրենաճանաչողության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կեցվածքը: Հայրենաճանաչողությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն:

Նախադպրոցական կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա սաների հայրենաճանաչողության ձևավորումն կարևորությունը: Հայրենաճանաչողության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սաների գիտելիքների, պատմական ուղու, նրանց սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն: Երեխայի արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից կրթության գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

1.2 Նախադպրոցականներին հայրենասիրական ոգով դաստիարակելու սկզբունքները

Նախադպրոցական տարիքում հայրենասիրական դաստիարակության բաղադրիչներն են.

- ✓ Նպաստել ընտանիքի, ծնողների և հարազատների հանդեպ սիրո և հարգանքի ձևավորմանը:
- ✓ Նպաստել բնության հանդեպ սիրո, հոգատար և խնայողական վերաբերմունքի ձևավորմանը:
- ✓ Ձևավորել հայրենիքի ավանդույթների նկատմամբ հարգանք:
- ✓ Ձևավորել հարգանք մեծերի աշխատանքի նկատմամբ:
- ✓ Տալ պատկերացումներ բանակի և դրա կարևորության մասին:

Հայրենաճանաչողության դաստիարակությունը դաստիարակների և սաների միջև գործընթաց է, որն ուղղված է հայրենասիրական զգացմունքների զարգացմանը: Սրա նպատակն է կրթել համոզված հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին, պատրաստ է ծառայել և պաշտպանել հայրենիքը: Երեխաների հայրենաճանաչողության դաստիարակությունը նախադպրոցական ուսումնական հաստատության հիմնական խնդիրներից է: Այս ուղղությամբ գոյություն ունի մեթոդաբանական գրականություն: Դրա հիման վրա

կրթական աշխատանքի այս ուղղությամբ կարելի է առանձնացնել առաջադրանքների մի ամբողջ համալիրը։

- Երեխայի սերը բարձրացնել իր ընտանիքի, տան, մանկապարտեզի, քաղաքի կամ գյուղի, փողոցի նկատմամբ։
- Երեխաների իմացություն իր արմատների մասին։
- Երեխաների ծանոթացում քաղաքի պատմությանը և ենթակառույցներին։
- Երեխաների ծանոթացում պետության խորհրդանիշներին դրոշ, զինանշան, օրհներգ։
- Այցելելություններ դեպի հայրենի մշակութային վայրերը՝ հուշարձաններ, թանգարաններ։

Մի շարք աշխատանքներ դեռևս կարելի է նշել։ Այս խնդիրները լուծվում են երեխաների գործունեության բոլոր տեսակներում խմբասենյակում, խաղերում, առօրյա կյանքում։ Երեխայի հայրենաճանաչողության դաստիարակությունը մանկավարժական բարդ գործընթաց է։ Այն հիմնված է հայրենասիրության՝ որպես անհատական որակի ձևավորման վրա։ Յուրաքանչյուր տարիքային փուլում հայրենաճանաչողություն և հայրենասիրական դաստիարակության դրսևորումներն ունեն իրենց առանձնահատկությունները։ Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մոտ հայրենասիրությունը սերմանելու նպատակն է ձևավորել նրանց բարի գործեր և արարքներ կատարելու անհրաժեշտություն։

Երեխաների հայրենաճանաչողություն ասելով հասկանում ենք մեծահասակի և երեխաների փոխգործակցությունը համատեղ գործունեության և հաղորդակցության մեջ, որն ուղղված է երեխայի մեջ մարդու համընդհանուր բարոյական որակների բացահայտմանն ու ձևավորմանը։ Դաստիարակի աշխարհայացքը, նրա անձնական օրինակը, դատողությունները, ակտիվ կյանքի դիրքը դաստիարակության ամենաարդյունավետ գործոններն են։ Եթե ուզում ենք, որ մեր երեխաները սիրեն իրենց երկիրը, իրենց քաղաքը պետք է նրանց ցույց տանք գրավիչ կողմից։ Բայց չափահասի ոչ մի գիտելիք արդյունք չի տա, եթե նա ինքը չի

սիրում իր երկիրը, իր քաղաքը, իր ժողովրդին: Երեխայի հայրենաճանաչողությունն ու հայրենիքի հանդեպ սիրո զգացումը սկսվում է ամենամոտ մարդկանց՝ հոր, մոր, տատիկի, պապիկի հանդեպ սիրուց: Եվ տունը, բակը, որտեղ նա մեկից ավելի քայլել է, տեսարանը բնակարանների և մանկապարտեզի պատուհաններից, որտեղ նա ուրախություն է ստանում իր հասակակիցների հետ շփվելուց, և իր հայրենի բնությունը՝ այս ամենը Հայրենիք է:

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Հետազոտական աշխատանքի գործնական մասն անցկացրել եմ Մասիսի թիվ 1 ՀՈԱԿ մսուր-մանկապարտեզում: Նախադպրոցականների հայրենաճանաչողության ձևավորման նպատակով անցկացրել եմ պարպմունքներ, որոնցից մի քանիսը ներկայացնում եմ ստորև:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՄԻՋԻՆ Ա ԽՄԲՈՒՄ

Թեմա՝ «Իմ քաղաքամայր Երևանը»

Տեսակը՝ զրույց

Խնդիրները

- Երեխաներին ծանոթացնել Հայաստանի քաղաքամայր Երևանին ևնրա տեսարժան վայրերին:
- Ծանոթացնել մեր երկրի պետական խորհրդանիշներին:
- Ձևավորել երեխաների կապակցված խոսքը, տրված հարցերին հստակ պատասխանելու, գոյականները,ածականները,խոսքում ճիշտ գործածելու կարողությունները:
- Բառապաշարի հարստացման զինանշան, օրհներգ, դրոշ, քաղաքամայր, կառավարական տուն, թանգարան շատրվաններ,պատկերասրահ բառերով:
- Արտահայտիչ արտասանություն, ոտանավորի ուսուցում

Անհրաժեշտ նյութեր՝ Հայաստանի Հանրապետության դրոշը, օրհներգի ձայնագրությունը, զինանշանը, Երևանի տեսարժան վայրերի նկարներ:

Պարապմունքի ընթացքը՝

Դաստիարակ- Յուրաքանչյուր երկրում կան բազմաթիվ մեծ ու փոքր քաղաքներ, սակայն այդ քաղաքներից մեկը երկրի գլխավոր քաղաքը կամ այլ կերպ՝ քաղաքների մայրն է:Այդ քաղաքում է գտնվում երկրի ղեկավարի, Հայաստանի

Հանրապետության նախագահի նստավայրը։ Այդ քաղաքում են գտնվում կարևոր շինություններ, գեղեցիկ, վարդագույն տուֆակերտ շենքեր, հրապարակներ, պուրակներ, հուշարձաններ, թանգարաններ ու պողոտաններ։

Այդ քաղաքը կոչվում է Երևան

- Ո՞րն է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը։
- Երեխաններ- Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը Երևանն է։
- Դաստիարակն արտասանում է։

Երևան

Իմ վարդագույն գեղեցկուհի,

Կանաչապատ ամրոց, այգի

Քաղաք իմ նոր հնամենի.

Արևոտ իմ օթևան,

Քաղաքամայր Երևան,

Քո շենքրով բազմահարկ,

Ու ջրերով սառնորակ,

Հյուրընկալ ես անչափ շատ։

Հ. Միտոյան

Զրույցի շարունակությունը։ Զրույցին զուգահեռ ցուցադրվում է Երևանի տեսարժան վայրերի պատկերներ, նկարների շարք։

- Երևանը Հայաստանի մայրաքաղաքն է։ Քաղաքի կենտրոնում՝ Հանրապետության Հրապարակում է գտնվում Հանրապետության կառավարության շենքը, որի վրա մշտապես ծածանվում է մեր երկրի պետական դրոշը՝ եռագույնը։



Դաստիարակ- Սա մեր պետական դրոշն է, եռագույնը՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն։

Կարմիրը՝ արևի, կակաչի, արյան, ուրախության, հաղթանակի գույնն է։
Կապույտը՝ գետերի, լճերի, երկնքի, զանգակածաղկի գույնն է։
Ծիրանագույնը՝ ցորենի հասկի, ոսկե դաշտերի, ծիրանի գույնն է։ Բոլոր հանդիսավոր արարողություններին բարձրացնում են հայոց դրոշը, իսկ տոնակատարություններին դրոշներով զարդարում հրապարակները, փողոցներն ու պողոտաները։
Երկրորդ խորհրդանիշը Հայաստանի զինանշանն է, որի վրա պատկերված են արծիվն ու առյուծը, որոնց գլուխները նայում են տարբեր կողմեր։ Այդ կենդանիներն առանձնանում են իրենց ուժով, խելքով, գեղեցկությամբ և խորհրդանշում են ուժ, հզորություն, աշխատանք և գեղեցկություն։



Երրորդ խորհրդանշանը Հանրապետության օրհներգն է:Դա հատուկ երգ է, որը հնչում է պետական պաշտոնական արարողությունների և հանդիսությունների ժամանակ,և բոլորն այն լսում են ոտքի կանգնած:

Հնչում է ՀՀ օրհներգի ձայնագրությունը :

Դաստիարակ- Երբ տարբեր երկրներում մրցում են մարզիկները հաղթողի պատվին հնչում է իր երկրի օրհներգը:Օրհներգը լսում են հոտնկայս, լռությամբ:

Դատիարակը շարունակում է պատմել երեխաներին, որ Երևանն ունի շատ հետաքրքիր տեսարժան վայրեր, վարդագույն շենքեր գեղեցիկ հրապարակներ և

հուշարձաններ, պուրակներ ու պողոտաններ: Երևանում է գտնվում օպերայի շենքը, Մատենադարանը, թանգարաններ ու թատրոններ, պատկերասրահներ, սրճարաններ:Երևանում է գտնվում կենդանաբանական այգին, տիկնիկային թատրոնը, մանկական պատկերասրահը, կրկեսը: Երևանը աշխարհի հնագույն քաղաքներից է, որն ունի իր պատմությունը: Դիտեցինք Էրեբունի ամրոցի Կայարանամերձ հրապարակի ու Սասունցի Դավթի հաղթական հուշարձանի նկարները:

Երևանը որքան հին է, այնքան էլ նոր: Օրեցոր նոր, ժամանակակից շենքեր են կառուցվում, որ հիացնում են ոչ միայն մեզ այլև զբոսաշրջիկներին: Նրա ծննդյան տոնն ամեն տարի աշնանը մարդիկ նշում են մեծ հաղիսավորությամբ: Երևանը սիրված, հարազատ քաղաք է յուրաքանչյուր հայի համար և նրանով հպարտանում են բոլորը:

Հարցազրույց՝ Երևանի մասին:

- Ինչպիսի՞ն է Երևանը:

- Ո՞ր հրապարակն է գտնվում քաղաքի կենտրոնում:

- Որո՞նք են հանրապետության թվով երեք խորհրդանիշները:

- Ինչպիսի՞ տեսարժան վայրեր ունի Երևանը։

- Ի՞նչ պետք է անել, որ Երևանը մաքուր քաղաք լինի։

Դաստիարակ- նկարել քաղաքամայր Երևանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ուսումնասիրելով խնդրին առնչվող մասնագիտական գրականությունը և հենվելով իրականացված հետազոտության վրա՝ կարող եմ եզրակացնել, որ

- Հայրենասիրական դաստիրակությունը հայրենիքի հանդեպ սիրո դաստիրակությունն է, նրան նվիրվածությունը, նրա հանդեպ պատասխանատվությունը: Ցանկացած աճող սերնդի հայրենասիրական դաստիրակությունը պետք է սկսվի իր հայրենի քաղաքի, բակի, մանկապարտեզի, երկրի նկատմամբ սիրո դաստիարակությամբ: Հայրենասիրական դաստիրակության համար նախադպրոցական ուսումնական հաստատությունները օգտագործում են աշխատանքի տարբեր մեթոդներ և ձևեր: Այդ նպատակով արդյունավետ և հետաքրքիր աշխատանքներում ներառվում են զբոսանքներ, էքսկուրսիաներ, դիտումներ, դիտարկումներ: Հայրենաճանաչողության դաստիրակության նպատակն է կրթել հայրենասեր, ով սիրում է իր հայրենիքը, հավատարիմ է հայրենիքին: Հայրենաճանաչողությունը բովանդակում է դաստիրակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայրենաճանաչողության նշանակությունը առաջին հերթին նպատակաուղղված է սաների գիտելիքների, պատմական ուղու, նրանց սոցիալական, հոգևոր և բարոյական փորձի վերաբերյալ գիտելիքներ հաղորդելուն, պատմական ժամանակաշրջանի վերաբերյալ որոշակի պատկերացումներ ձևավորելուն:
- Նախադպրոցական տարիքում հայրենասիրական դաստիարակության նպատակն է ձևավորել հայրենիքի ավանդույթների, մեծերի աշխատանքի նկատմամբ հարգանք, նպաստել ընտանիքի, ծնողների և հարազատների հանդեպ սիրո և հարգանքի ձևավորմանը, բնության հանդեպ հոգատար և խնայողական վերաբերմունքի ձևավորմանը, տալ պատկերացումներ բանակի և դրա կարևորության մասին:
-

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան; Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Մանկավարժ 2005
2. Козлова, С. А. Дошкольная педагогика: учеб.пособие для студ. сред. пед. учеб. заведений. — 15-е изд., исправ. и доп./ С. А. Куликова, Т. А. Куликова. — М.: Издательский центр Академия, 2015. — 432с.
3. Агапова Д. Ю. Патриотическое воспитание дошкольников в условиях дошкольных образовательных организаций.
4. Васильева. Патриотическое воспитание детей старшего дошкольного возраста https://www.maam.ru/detskijsad/opyt-raboty-po-teme-patrioticheskoe-vospitanie-detei-starshego-doshkolnogo-vozrasta.html